ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N4

Մանկավարժական խորհրդի արտահերթ նիստը կայացել է 2023 թվականի դեկտեմբերի 26-ին

Մանկավարժական խորհրդի արտահերթ նիստին մանկավարժական խորհրդի 68 անդամներից մասնակցում էին թվով 66 անդամներ, բացակա՝ 2 :

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ

«ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունու Ս.Դարբինյանի անվան N2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի թափուր տեղի հավակնորդ Խ.Ղազարյանի հետ հանդիպում զարգացման ծրագիր կազմելու համար առաջարկություններ լսելու նպատակով:

/Զեկուցող՝տնօրեն՝ Խ.Ղազարյան/

Խ.Ղազարյանը մանկավարժական խորհրդին ներկայացրեց «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղի մրցույթի հայտարարման, անցկացման, մասնագիտական հանձնաժողովի ձեվավորման, գործունեության, տնօրենի նշանակման եվ բողոքարկման» կարգը,որի համաձայն տնօրենի հավակնորդը պետք է հանդիպի մանկավարժական խորհրդի հետ՝ զարգացման ծրագիր կազմելու համար առաջարկություններ լսելու նպատակով:

Դպրոցի գործունեության վերաբերյալ դրական կարծիքներ արտահայտեցին մի շարք ուսուցիչներ/Գ.Քոչարյան,Վ.Բաղդասարյան,Ա.Մելիքյան,Գ.Կարապետյան և այլք ու միաժամանակ հանդես եկան ներկայացվող առաջարկներով.

1.Ապաստարանի ,էլեկտրոնային հրաձգարանի ստեղծում,որը կապահովի սովորողների անվտանգությունը

2.Նյութատեխնիկական բազայի վերազինում

3.ՏՀՏ նորագույն սարքավորումներով նյութատեխնիկական բազայի հարստացում:

4.ՈՒսումնաօժանդակ,դիդակտիկ նութերով համալրել ուսումնական գործընթացը,գրեթե բոլոր ուսումնական առարկաների գծով:

5.Դասարաններում աշակերտների թվի կրճատում,ինչը կապահովի ուսուցման արդյունավետության բարձրացմանը:

6.ՈՒսումնական էքսկուրսիաների կազմակերպում «Կենսաբանություն» առարկայի հետ կապված՝պետական հոգածությամբ:

Դպրոցի լոգոտիպի ստեղծում և ձեռնարկատիրական գործունեության ծավալում,ըստ անհրաժեշտության/:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Վերոնշյալ առաջարկները ներկայացնել տնօրենի հավակնորդ Խ.Ղազարյանին Դպրոցի զարգացման 2024-2029թթ.ծրագիրը կազմելու համար:

Մանկավարժական խորհրդի նախագահ՝----------Խ.Ղազարյան

Քարտուղար՝----------Ա.Շահումյան